

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Եկեղեցի, ավետարանական, ուղղափառ, կաթոլիկ, սուրբ հոգի, հին կտակարան, շիսուս Քրիստոս:

Ключевые слова и выражения: Церковь, евангельский, православленный, святой дух, Ветхий Завет, ИИсус Христ.

Key words and expressions: Church, Orthodox, Catholic, Saint Soul, Old Testament, Jesus Christ.

19-րդ դարու փիլիսոփայական երկերու մէջ գերիշխող կարծիք էր, թէ արդիւնաբերական աճին զուգընթաց կրօնին դերը պիտի նուազի (Քառլ Մարքս, Զիգմունտ Ֆրոյտ, Մաքս Վեպեր, Էմիլ Տիւրկհայմ): Կրօնի դերի տկարացումին գլխաւոր գործիքը աշխարհականացումն է: Բայց «տարբեր կրօնական ուղղութիւնների ներկայացուցիչներ, կրօնական համոզմունքների թուլացմանը զուգահեռ, սկսում են առաւել հանդուրժողական վերաբերուել այլ կրօնական ուղղութիւնների ներկայացուցիչներին՝ հիմնուելով կասկածամիտ մօտեցումների վրայ»¹:

Եթէ նոյնիսկ եկեղեցականներ այդպէս չէին խորհիր, այնուամենայնիւ, հարկադրուած էին հաւատացեալ հոգիներու հետ հաղորդակցուելու նոր ուղիներ ու եղանակներ փնտռել: Միւս կողմէն՝ ընկերային յարաբերութիւններու մէջ կրօնի կազմակերպիչ գործառոյթի տկարացումին զուգընթաց՝ համարժէք իշխանութիւն ունենալու պահանջքը եւրոպացի մտածողները կը յանգեցնէ այն մտքին, թէ հարկաւոր է յոյսը դնել մարդկային բանականութեան առասպելաբանական զօրութեան վրայ: Այս աւելի հրատապ դարձուց գիտութեան զարգացումին պահանջքը, մանաւանդ որ այլ ընտրանքները սահմանափակ էին: Սկսեալ 17-18-րդ դարերէն, եւրոպական հումանիտար ու գիտական միտքը կրթութիւնը այլ կերպ չէր պատկերացներ, քան մարդու բազմակողմանի զարգացումը, «ազատ արուեստներու» եւ դասական լեզուներու իմացութիւնը՝ ենթադրելով, որ «բառերը շատ աւելի վաղ կ'իրացուին, քան գաղափարները»²:

¹ Berger P. The Social Reality of Religion. London: Faber, 1967. P. 152.

² **Моль А.**, Социодинамика культуры . М., Прогресс, 1973, с. 37:

Ոմանք կը կարծէին, թէ հասարակական կեանքի վերածնունդը հարկաւոր է կապել արուեստի ու մշակոյթի հետ: Այդպիսի մտածողներէն էր Ֆ. Շիլլերը, որ կը կարծէր, թէ արուեստը կրնայ փոխարինել ճգնաժամ ապրող կրօնին ու գործել որպէս ընկերութիւնը համախմբող ուժ, եթէ այն ընկալովի որպէս «հաղորդակցումի ձեւ» ու եռանդուն դեր ստանձնէ մարդոց միջանձնային յարաբերութիւններու մէջ, որով կը մասնակցի մարդկային ստեղծագործութեան մեծագոյն արժէքի՝ «ճշմարիտ քաղաքական ազատութեան» արարումին³:

Հակառակ պարագային, ինչպէս կը կարծէ Հեգելը, կրօնական գիտակցութեան ճգնաժամի խորացումը կրնար յանգեցնել անոր, որ՝ «Եթէ աղքատներուն այլեւս Աւետարան չեն քարոզեր, եթէ աղը կորսնցուցեր է համը, լուրթեամբ կ'ոչնչացուին բոլոր պատուարները, ապա ժողովուրդը, որու անձկուն բանականութիւնը ի գորտ է ճշմարտութիւնն ընկալել որպէս միայն պատկերացում, այլեւս անկարող կ'ըլլայ գոհացնել իր ներաշխարհին ձգտումները»⁴:

Նոյն գաղափարները կը նշեն հայ աւետարանականները. «Որեւէ ծառ իր երեւելի հասակին չափով ալ հողին ծոցին մէջ թաղուած անտեսանելի արմատներ ունի: Նոյնը ճշմարիտ է պատմական դէպքերու համար, որոնք կը դասաւորուին եւ կը պիտակուին սոսկ թուականով մը: Օրինակի համար, 1776-ը պատմական թուական մըն է, որ ի յուշ կ'աճէ Ամերիկայի պետական անկախ կեանքին սկզբնաւորութիւնը: Բայց այդ սկզբնաւորութիւնը՝ երկար տարիներու դէպքերուն վերաբերմամբ նաեւ վերջայանգ /epilogue/ մըն է: Ըիշդ այդպէս է նաեւ 1846 թուականը մեզի համար»⁵: Հարիւր տարի յետոյ կը գրեն հայ աւետարանականները. «Նոր գաղափարներու ծնած յեղաշրջութիւնը յաճախ այնպէս կը ցնցէ ընկերային կեանքը, որ ճակատագրօրէն փոփոխութիւն մը երեւան կուգայ մարդոց ըմբռնումներուն եւ տեսակէտներուն մէջ...Անոնք որ կառչած կը մնան իրենց ընտելացած սկզբունքներուն, չեն կրնար տեսնել ճշմարտութիւնը, վասն զի չեն ուզեր, ու այսպէս կ'ենթարկուին կուրութեան մը, որ կամաւոր ըլլալուն պատճառաւ կը կորսնցնէ չքմեղանքի ամեն իրաւունք: Մեծագոյն յեղաշրջութիւնը, որ երբեք տեղի ունեցած ըլլայ մարդկային ընկերութեան ծոցին մէջ, է այն՝ զոր ծնած է քրիստոնէական գաղափարը: Մտածումի եւ կեանքի ամենէն լուրջ ու

³ Johann Christoph Friedrich von Schiller. Über die ästhetische Erziehung des Menschen. Suhrkamp Verlag Frankfurt am Main 2009, S. 88.

⁴ G. W. F. Hegel. Vorlesungen über die Philosophie der Religion, Werke in zwanzig Bänden. Band 18. Frankfurt am Main 1979, S. 81-113.

⁵ Հայաստանեայց աւետարանական եկեղեցին, հրտ. Պէրյոյթ, 1986, էջ 23-24

փրկարար փոփոխությունները անոր արդիւնքն են: Բարոյականի եւ գիտութեան, խորհուրդի եւ մտածումի մարգերուն վրայ կատարուած բոլոր ազնիւ եւ մարդօգուտ յառաջդիմությունները՝ ամէնքն ալ ներշնչուած են Աւետարանի ոգիէն»⁶:

Հայ Աւետարանական Եկեղեցին վերջապէս կազմակերպուեցաւ հետեւեալ դասական հիմունքներու վրայ՝ կը գրեն Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ հայ գաղափարախօսները, - «(ա) Երրորդութիւնը միայն պաշտամունքի առարկայ պիտի ըլլայ. (բ) Աւետարաններու ոգիին եւ տառին հետ չեն համաձայնիր աճիւններու, խաչի, եւ պատկերներու գործածութիւնը. (գ) մարդ ի բնէ մեղանշական է եւ Աստուծոյ վերածնիչ զօրութեան կարօտ, եւ Բանին քարոզութիւնն է ազդուագոյն միջոցն որով այդ զօրութիւնը կրնայ հաղորդուիլ ենթակային. (դ) Աստուածաշունչը հաւատքի եւ կեանքի միակ առաջնորդն ու կանոնն է. (ե) Քրիստոս է եկեղեցիին միակ Գլուխը, Փրկիչը, եւ Բարեխօսը, եւ մեղաց քաւութեան միջոցը. (զ) փրկութիւնը հաւատքով կը գործուի եւ ոչ թէ բարի գործերով, կամ ծովապահութեամբ, կամ ողորմութեամբ, կամ ապաշխարագինով. (է) սուրբ կեանք մը ապացոյց է փրկութեան. (ը) ճշմարիտ քրիստոնեաներու ռեւէ խմբակցութիւնը Յիսուս Քրիստոսի եկեղեցին կը կազմէ. (թ) խորհուրդները երկուք են՝ Մկրտութիւն եւ Հաղորդութիւն»⁷:

Ապտուկ Մեծիկ Ա-ի (1839-1861) 1839 թ. նոյեմբերի 3-ի հրովարտակը կը նկատուի շրջադարձային ժամանակ⁸: Ըստ հրովարտակի, խտրականութեան ենթարկուած ոչ մուսուլմանները ճանչցուելու էին իրաւահաւասար օսմանեան քաղաքացիներ. «Ֆրանսիական յեղափոխութեան նուաճումները (մարդու իրաւունքներ, դասանանքի ազատութիւն եւ այլն) անհետեւանք չէին անցնում Օսմանեան կայսրութեան

⁶ Վեր. Կ. Պ. Ատանալեան, Յուշարձան Հայ աւետարանականաց եւ..., էջ 4:

⁷ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին, Պէյրութ, Հայ Տիպ Քոմիիկրաֆ-Թէքնոփրէս 1986, էջ 28-29:

⁸ Օսմանեան իշխանութիւնների կողմից բողոքականութեան տարածմանը նպաստելու տրամաբանութեան մէջ է տեղաւորում նաեւ այն, որ Կ.Պոլսում հայ աւետարանական առաջին համայնքի փաստացի ձեւաւորումից /1846թ./ չորս տարի անց՝ 1850թ., սուլթան Աբտուլ Մեջիտ 1-ինի հրամանով այն ստացաւ պաշտօնական պետական ճանաչում՝ կոչուելով Բողոքական ազգ (Պրոտեստանտ միլլէթ/ Հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2012, էջ 82:

կողքով,- կը գրէ Վ. Բաումը,- եւ քրիստոնեաների համար աստիճանաբար ազատագրուելու հնարաւորութիւններ էին ստեղծում»⁹:

1840-1860-ական թուականները հայ ազգային ոգին վերածնութեան տարիներ էին: Արեւմտահայ մշակութային կեդրոններու մէջ մտաւորականութիւնը փորձած է ժամանակի նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացումին: Արեւմտահայ շրջանակներու մէջ հայկական կեանքի ազատականացումի միտումներ ստեղծուած են:

Աշխարհայեացքի ու հասարակական մտքի կազմաւորումին նպաստած է մամուլը: «Կը պատկերացնեն ԺԹ. դարու սկիզբները մոայլ, Վերածնունդի երկունքով լի: Այդ վիճակը ունէր հայ դպրոցը, այդ վիճակը ունէին հայ ժողովուրդը-երկունքի մէջ էր ազգը համայն, մանաւանդ եկեղեցին...Հայ դպրոցը ուստում մը կատարեց 1840-1860-ին՝ **մաքրուիլ-սկսաւ, «Փոխակերպուեցաւ 1840-1866-ին»**¹⁰,-կը նկատէ հայ աւետարանական գաղափարախօսը:

«Բողոքականութիւնը ծնած է երկու մեծ շարժառիթներէ, - կը գրեն հայ աւետարականները, - 1.- Փափաքը ետ երթալու Նոր Կտակարանի, այն է նախնական Քրիստոնեայ Եկեղեցւոյ պարզ հաւատքին ու ապրումին կանոնը: 2. -Անօրեայ գործերու մէջ բերել բարոյական ու հոգեւոր բարեփոխութիւն, Յիսուս Քրիստոսի վարդապետութեան հետեւելով»¹¹:

Արեւմտահայ մամուլը աննախադէպ զարգացում արձանագրեց 1840-ական թուականներուն: «Որչափ դժուարին էր ի սկզբանէ բողոքականութեան մուտքն, նոյնչափ կը ճգնէին Ամերիկեան Միսիոնարք-իրենց սովորական կերպովը հարթել դժուարութիւնները՝ ծածկելով ամենայն ինչ գիտութեան՝ արտաքնայարդար անկեղծութեան եւ ծառայամտութեան քողին ներքեւ: Ի՞նչ աւելի կրնար իրենց սկզբունքները մուծանել տակաւին քնացող ազգի մը մէջ, եթէ ոչ յանկուցիչ՝ միանգամայն դիւրագին լրագիր մը»¹²,- կը նկատէ հայ լրագրութեան պատմաբանը:

«Նոր բովանդակութիւն է ստանում ազգային շարժումը, հայ աշխարհայեացքը դասականութիւնից անցում է կատարում ազգային ռոմանտիզմին,- կ'ընդգծէ գրականութեան պատմաբանը: -Եւ, ի

⁹ Վիլիելմ Բաում, Թուրքիան եւ նրա քրիստոնեայ փոքրամասնութիւնները (Գերմաներէն թարգմանեցին Դորա Սաքայեան եւ Էվելինա Մակարեան), Ե., 2010, ԵՊՀ հրատարակչութիւն, էջ 43):

¹⁰ Վեր. Կ. Պ. Աստանալեան, Յուշարձան Հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցիոյ, էջ 33:

¹¹ Նոյն տեղը, էջ 61:

¹² Գրիգորիս վ. Գալէմբեան, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1893, էջ 39:

տարբերություն երոպական ռոմանտիզմի, որ ծնունդ առաւ որպէս հակադեցութիւն 18-րդ դարու լուսաւորական ռացիոնալիզմի, հայկական ռոմանտիզմը ամբողջապէս տոգորուում է լուսաւորական փիլիսոփայութեամբ՝ ձեռն առնելով մի ուրոյն լուսաւորական ռոմանտիզմի... Կենսական անհրաժեշտութիւն էր ազգապահպանութեան մէկ այլ սուբստանցի՝ **եկեղեցու աշխարհականացումը**: Արդէն անախրոնիզմ էին կոչերական սխալաստիկան ու դոգմատիկ պահպանողականութիւնը ոչ միայն ծիսական արարողութիւններում, այլեւ **Աւետարանի մեկնութիւններում եւ կրօնի փիլիսոփայական իմացաբանութեան մէջ**¹³:

Այդ տարիներուն կը գուգադիպի հայ Աւետարանականներու գործունէութեան շրջադարձային պահը, երբ «միսիոներական տան» մէջ¹⁴ կը սկսին պաշտօնապէս կիրականօրեայ ժողովներ կազմակերպել: «Օրագիրը աւելի ոյժ տուած էր գիտութեան եւ լեզուաց, թէպէտ լաւ բաժին մըն ալ սահմանուած էր կրօնական ուսմանց: ...Նոյն 1839 տարւոյ սկիզբը 50-ի հասած էր ձեմարանի աշակերտներուն թիւը. եւ միջոց մը գործերը բաւական կանոնաւոր քալեցին իբրեւ առաջին եռանդ, եւ Աղանի յորդորականներու ներքեւ, սակայն համառօտ եղաւ այդ միջոցը: Այդ տարիներու մէջ նոր հոսանք եւ նոր շարժում սկսած էր Հայոց մէջ, որոնք ինչպէս յայտնի է միշտ միտեալ գտնուած են նորութիւններէ հրապուրելու: Հիւսիսային Ամերիկա Միացեալ-Պետութեանց /Etats-Unis/ կամ ինչպէս սովորութիւն եղած է գործածել, Միացեալ Նահանգաց բնակչութիւնը, որուն տիրող կրօնքը՝ բողոքականութեան Աւետարանական կոչուած յարանուանութիւնն է, կրօնական թէ քաղաքական դիտումներէ մղուած, որոշեց արտաքին ազդեցութիւն մշակել, ուսում տարածելը իբր միջոց եւ դաւանութիւն տարածելը իբր նպատակ գործածելով: ...Առաջին քայլերը քաջալերական եղան, եւ 1829-ին **Ամերիկայի քարոզչական խումբը որոշեց Թուրքիոյ Հայոց մէջ բողոքականութիւնը քարոզել կանոնաւոր կերպով**»¹⁵,-

¹³ Հայոց գրականութեան պատմութիւն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2015, հ. 3, էջ 106-107:

¹⁴ «Միսիոներական գործունէութեան խրախուսումը եւ կաթողիկէ ու աւետարանական համայնքների ձեւաւորումը լայն դուռ բացեցին կայսրութեան ներքին գործերին արտաքին միջամտութեան եւ այդ միջամտութեան օրինականացման համար», -կը նշեն աւետարականները / տե՛ս Ղանալանեան Տ., Հայ բողոքականներ, 21-րդ դար, 2010, թիւ 4, էջ 39/:

¹⁵ **Մաղաքիա արք. Օրմանեան**. Ազգապատում. Հատոր Գ, Մեւան տպարան, Պէյրութ, 1961, /2435/: Ի դէպ, «Աւետարեւ եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի խմբագրութիւնը «Մասիսն ու Ամերիկայի միսիոնարները» յօդուածով կը պատասխանէ, թէ՛ Մասիս լրագիրին խմբագրիչը տակաւին ջանք կ'ընէ շաբթէ

կը գրէ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք, աստուածաբան, հայագէտ, Մաղաքիա արք. Օրմանեան:

Եւ իրօք, 19-րդ դարու 20-30-ական թթ. հասարակական կեանքում գործուն մասնակցութիւն կ'ունենան հայ բողոքականները¹⁶. անոնք կը գործեն Շուշի, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Կալկաթա: «Իրենց գործունէութեամբ ... նրանք, սակայն, մեր այսօրուայ աշխարհաբարի տարածման սկզբնաւորման հարցում որոշ դեր են խաղացել: Յայտնի է, որ այն ժամանակ, երբ աշխարհաբարը պաշտօնապէս չէր ճանաչուած իբրեւ հայ ժողովրդի գրաւոր լեզու, նրանք իրենց կրօնական դաւանանքը՝ **աւետարանական կամ բողոքական**, ժողովրդի մէջ դիւրութեամբ տարածելու նպատակով հրատարակեցին բաւականաչափ աշխարհաբար գրքեր»¹⁷, -կը գրէ քննադատը:

շաբաթ իր ընթերցողները լուսաւորել Անգղիայի, Ամերիգայի և Գերմանիայի մէջ թէ հինուց ու թէ հիմակուան եղած կրօնական բազմաթիւ **աղանդներուն** վրայ: Աս բանը կրնայ հետաքրքրական ու շահաւոր ըլլալ իբրն կրօնական պատմութեան առարկայ մը, բայց նորէն կ'ուզենք ըսել իրեն որ ամենաթեթիւ կապակցութիւն մը անգամ չունի մեր իրեն առաջարկած ու իրեն ալ պատասխանել խոստացած խնդիրին: Տաճկաստանի մէջ Պապական Հայ Եկեղեցի եւ Բրօթեսթանդ Հայ Եկեղեցի ըլլալուն նկատմամբ Մասիսին Խմբագրիչին ունեցած պատասխանատուութենէն աւելի Ամերիգացի Միսիօնարները պատասխանատուութիւն չունին ան աղանդներուն նկատմամբ: Կրօնական բաժանումները չէ թէ Բրօթեսթանդութեան կամ Հռոմէականութեան կամ Հայկականութեան պտուղներն էին՝ այլ կրօնական ազատութեան: Անգամ մը որ կրօնական ազատութիւն ըլլայ, բուն մարդկային բնութենէն է որ բաժանումներ կը գոյանայ /1857, թիւ 74/:

¹⁶ «Վասն որոյ Փրօթեսթան նախնական բառին բուն թարգմանութիւնը չէ՝ գործածուած մեր «Բողոքական» բառին յորջորջումը, -կը նշէ «Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ»-ին հեղինակը: -Այս պատճառաւ մենք պիտի գործածենք հոս ճիշտ բառը, փոխանակ «Բողոքական» -ի, ինչ որ թուրքերէնի մէջ պահուած է եւ այդ անունով *ֆերմաններ* տրուած են: Եւրոպական ծանօթ ձեւը մեր բնական նոր շարժումին իսկական նշանակութիւնը եւ հաստատումն է մեր Բողոքականութեան բուն նպատակին, իմաստին եւ ոգիին: Վերոգրեալ երկու սկզբունքներ-propositions-կը յայտնեն «բացորոշութեան» գաղափարը-idea of openness, կամ վկայուած բանին հրատարակումը. Publicity of that of witness, կամ հռչակումը-declaration, որուն մէջ բացասական իմաստ մը չկայ, այսինքն բանի մը դէմ բողոքել: Վասն որոյ- «Փրօթեսթանթ», protestation բառին արմատէն կուգայ, ինչպէս վերը բացատրեցինք-*բացէն վկայել, խոստովանիլ, հռչակել, հանդիսաւորապէս յայտարարել, հաւաստել, լրջօրէն պաշտպանել, երդնուլ, ուխտել Աստուծոյ առաջէ*: Ըլլալ գուտ Աւետարանական եւ Աւետարանիչներ»:

¹⁷ **Դաթեան Հ.**, Հայ գիրքը 1801-1851 թուականներին, Ե., 1967, էջ YIII:

«Գրական զարթոնք էր ապրում Զմիռնիան: Սկսած 1838 թուականից, կրօնական բովանդակությամբ բաւականին շատ արձակ ու չափածոյ պատմութիւններ են տպագրում Զմիռնիայի բողոքականները՝ նախատեսուած գլխաւորապէս մանուկների համար. «Զբօսարան մանկանց հոգեւոր տաղերու եւ խրատներու», «Խաշնարածին աղջկան Եղիսաբեթին երջանիկ մահը», «Երկու գառնուկներուն պատմութիւնը», «Յովսէփին պատմութիւնը տղայոց եւ պատանիներուն համար շինուած», «Քրիստիանոսին ու Քրիստինէին ճամբորդութիւնը աս աշխարհէն հանդերձեալ աշխարհը երազի ձեւով», «Հոգեւոր երգեր» եւ այլն: Այս իբր թէ գեղարուեստական գրուածքները ըստ էութեան բողոքական կրօնաւորների կողմից գրուած կամ թարգմանուած քարոզներ էին, որոնց նպատակն էր Քրիստոսի ուսմունքի տարածումն իրենց բողոքականների ձեւով»¹⁸:

19-րդ դարու 30-40-ական թուականներու ընթացքին Օսմանեան կայսրութեան նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը եւ ամերիկեան միսիոնարական կազմակերպութիւններու գործունէութիւնը որոշակի դերակատարութիւն ունեցած են արեւմտահայութեան ճակատագրի մէջ: «Արեւմտեան Հայաստանում ամերիկեան միսիոներների գործունէութեան վերաբերեալ հայ հասարակական միտքը հիմնականում առաջ է քաշում երկու իրարամերժ տեսակէտ,- կը նշէ պատմաբանը:-Առաջին տեսակէտի համաձայն, որը հիմնականում արծարծուել է ժամանակի նշանաւոր թերթերում՝ «Մշակ», «Հովիտ», «Ժամանակ», «Արեւելք», «Արարատ» եւ այլն, միսիոներներն Օսմանեան կայսրութիւն էին գործուղուել ԱՄՆ-ի քաղաքական շահերն իրականացնելու համար: Հետեւաբար ցանկացած մարդասիրական քայլ, որ արւում էր նրանց կողմից, համարւում էր շահադիտական ձեռնարկում: Միւս տեսակէտն, ընդհակառակը, փորձում է բացառել միսիոներական գործունէութեան շահադիտական կողմը՝ նրանց ներկայացնելով որպէս բարերարներ: Այդ տեսակէտը հիմնականում առաջ է քաշում սփիւռքահայ պատմաբանների աշխատութիւններում»¹⁹:

ԱՄՆ-ի «մշակութային իմպերիալիզմի» տեսութեան իրականացումի մէջ մեծ դերակատարութիւն ունեցան ոչ պետական դերակատարները՝ միսիոնարները. «ԱՄՆ-պահանջում էր, որ իր ազդեցութեան ներքոյ գտնուող երկրները ձեւափոխեն իրենց հասարակութիւններն ամերիկեան արժեքների հիմքի վրայ: Այդ «բարեփոխումները» նպատակաւորաբար էին

¹⁸ Նոյն տեղը, էջ XLYIII:

¹⁹ **Գեորգեան Ս. Բ.** Ամերիկեան միսիոներների գործունէութիւնն Արեւմտեան Հայաստանում 1895-1914 թուականներին, Ե., 2015, /Մեղմագիր/:

տնտեսությունների կայունացմանը, ազնիւ, գործունեայ եւ ներկայացուցչական կառավարություններ պատրաստելուն, առողջապահութեան եւ բժշկութեան նոր մեթոդներ կիրառելուն, հետապնդում էին համապատասխան մշակութային փոփոխություններ հասարակություններում»²⁰, - կը գրէ Ա. Կիրակոսեանը:

Միսիոնարներու յայտնությունը նոր «հարթություն» ստեղծեց Օսմանեան կայսրութեան մէջ: Մէկ կողմէն, միսիոնարները արտաքին աշխարհին տեղեկատվություն կը տրամադրէին քրիստոնեաներու վիճակի մասին, միւս կողմէն, անոնք մշտապէս պահանջներ կը դնէին կայսրութեան պետական մարմիններուն՝ քրիստոնեաներուն լայն ազատություններ տրամադրելու մասին: Անոնց գործունեությունը կ'առաջացնէր արեւելեան եկեղեցիներու առաջնորդներու, մահմետականներու, օսմանեան կառավարութեան եւ նոյնիսկ դիւանագիտական ներկայացուցիչներու դժգոհությունը²¹:

«Թէեւ միսիոներութեան նպատակն ի սկզբանէ եղել է քրիստոնեութեան տարածումն այլակրօնների շրջանում, սակայն գալով Օսմանեան Կայսրութիւն՝ քարոզիչներն իրենց գործունեությունը տարածում են նաեւ կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդների վրայ՝ նպատակ ունենալով նրանց դաւանափոխել բողոքականութեան: Պատճառը գլխաւորապէս մուսուլմանների եւ հրեաների անընկալունակությունն էր աւետարանական քարոզչութեան նկատմամբ, եւ նրանք Օսմանեան կայսրութիւնում բախուեցին վերջիններիս բացասական վերաբերմունքին»²², - կը նշեն հայ բողոքականները: «Անյաջողութեան մատնուելով այլակրօններին քրիստոնեացնելու մէջ՝ միսիոներները իրենց գործունեութեան թիրախ են դարձնում Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներին: Միսիոներ Փ.Ֆիսկը հիմնաւորում է իրենց գործունեութեան վերանայումը. Օսմանեան կայսրութիւնում առկայ քրիստոնեաների տարբեր խմբերի շրջանում ինչ-որ բան կարելի է անել»²³:

²⁰ **Կիրակոսեան Ա.** ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը եւ արեւմտահայությունը //19-րդ դար-1914 թ./, ԵՂՀ հրատ. 2014, էջ 54-55 /Տեւ` Fry, Joseph A., Y.i. ..E., p. 63-64//:

²¹ **Salt, Jeremy**, Imperialism, Evangelism and the Ottoman Armenians, 1878-1896, Portland, Oregon: Frank Cass, 1993, p. 30.

²² **Միմառքեան Ա.**, Հովեան, Հայ կաթողիկէ եւ Աւետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ, Ե., 2012, էջ 77-78

²³ **Kutvirt Th.**, “The Establishment of an American Protestant Mission to the Armenians (1810-1830)”- The Armenian Review, Boston, 1972, Vol. 25, No 3 (99), p. 44.

Օսմանեան կայսրութիւն ժամանած առաջին միսիոներները տպաւորուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներէից հայերն ամենից **բացն էին բողոքական միսիոներներու գործունէութեան հանդէպ**: Ընդհանուր գաղափարն այն էր, որ գլխաւոր նպատակը պէտք է դառնար աշխարհի բարոյական վերակառուցումը, դպրոցի եւ եկեղեցւոյ հիմնադրումը, իւրաքանչիւր ընտանիքի համար Աստուածաշունչ կարդալու եւ աղօթելու հնարաւորութեան ստեղծումը, նոր աշխարհի **բողոքականութեան արտահանումն** ու տարածումը:

Միսիոներները քննադատող գրախօսական յօդուածի մէջ Միք. Նալպանտեան կը նշէ. «Մենք յոյս ունենք, որ մեր համազգի հռովմէական կամ բողոքական եղբայրքը չգայթակղին մեր խօսքերից: Մենք ոչ ոքի ներքին կրօնը կամ խիղճը դատելու, չասենք յանդգնութիւնը, այլ գէթ աշխարհաբար խօսելով, յիմարութիւնը վիզ առնող չենք. եւ մեր պատերազմը այս կամ այն հաւատալիքի ընդդէմ չէ, այլ բռնութեա՛ն ընդդէմ, որ մենք տեսնում ենք այն եկեղեցիներում, որք կամենում են մեզ ազատութիւն պարգեւել: Ո՛հ, մի ազատութիւն, որ բնաւ տարբերութիւն չունի բռնութիւնից: Ինչ վերաբերում է բուն ներքին կրօնին, թո՛ղ իւրաքանչիւր մարդ իւր խղճմտանքից հարցանէ եւ պատասխան տայ Աստծոյ: Մենք ո՛չ ինկվիզիտոր ենք, ո՛չ միսիոնար»²⁴:

Համոզուելով, որ մահմետականները եւ հրեաները աւետարանական դարձնել անկարելի է, 1831 թ. «Ամերիկեան խորհուրդը» որոշում կայացուց իր ամբողջ գործունէութիւնը ուղղել Արեւելքի «այլասերած» եկեղեցիներու «հոգեւոր լուսաւորութեանը»: Կոստանդնուպոլսի կայանը նպատակ ունէր կրօնափոխութեան աշխատանք տանիլ հայերու, Զմիւռնիոյ եւ Աթէնքի կայանները՝ յոյներու, Պէրլոքի կայանը՝ արաբ քրիստոնեաներու մէջ: Առաջին տարիներու ընթացքին միսիոնարները կը ծանրանային յատկապէս լեզու սորվեցնելու, Աստուածաշունչ թարգմանելու, կրօնական գրականութիւն տպագրելու վրայ: Հիմնական յաջողութիւն արձանագրուեցաւ հայերու հետ: Միսիոնարներու թարգմանչական, հրատարակչական եւ «աւետարանականացման» գործունէութեանն աւելցաւ նաեւ ընդհանուր կրթութեան ասպարէզը: Միսիոնարական դպրոցները կ'ընդգրկէին ամեն տեսակ կրթական հաստատութիւններ՝ մանկապարտէզէն մինչեւ աստուածաբանական ճեմարան: Ամերիկեան միսիոնարները հիմնեցին նաեւ բժշկական հաստատութիւններ՝ հիւանդանոցներ ու որբանոցներ:

Միսիոնարները շատ քիչ հնարաւորութիւն ունէին բարեփոխելու Մերձաւոր Արեւելքի քրիստոնեայ եկեղեցիները: Անոնք շուտով հասկցան,

²⁴ Նալբանդեան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4, էջ 137:

որ հնարատրություն ունին միայն «բուն քրիստոնեայ հողին» վրայ պատուաստելու «եռանդուն ամերիկեան բողոքականությունը»: Իրենց գործունեությունը միսիոնարները սկսան՝ քննադատելով սովորություններն ու ծիսակատարությունները, որոնք պաշտամունքային կը նկատվին: Քննադատության առաջին կարգին էին «տգեա հոգեւորականությունը», անոնց «զգեստատրությունը», վանքերը, հոգեւորականության «ամուրիությունը», «եպիսկոպոսական կառուցուածքը»²⁵/տե՛ս ստորեւ/: Այնուհետեւ ցցուն կերպով կը շեշտեն տարբերությունները, որ կային աւետարանական եւ միւս եկեղեցիներու միջեւ, անշուշտ, յօգուտ աւետարանականի:

Իսկ նման տարբերություններ շատ կան ուղղափառության ու բողոքականության /աւետարական/ հաւատքներու միջեւ՝ դաւանաբանություն, ծեսեր, եկեղեցական պաշտամունք²⁶:

«Բողոքականությունը երեք մեծ սկզբունքներու վրայ հիմնուած է՝ 1.- Անոր բացասական սկզբունքը. ներկայ եկեղեցական ուսուցումը եւ ընդհանուր հաւատալիքի ո՛րեւ մասը որ պատմութեան մէջ դէպի ետ երթալով Քրիստոսի եւ առաքեալներու ուսուցածէն դուրս կը մնայ Քրիստոնէութեան էական մաս չէ», -կը գրեն հայ աւետարականները: 2. – Անոր դրական սկզբունքը, -կը շարունակեն հայ աւետարանականներու

²⁵ «Պարապ փախչելու ճամբայ մըն է Մասիսին Խմբագրիչին ըսելը, թէ այնչափ աղանդ կայ Բօթեյաթանդներուն մէջ, որ չկրնար ըսել, թէ Ամերիգացի Միսիօնարներուն քարոզած վարդապետությունը ինչ է: Անոնք հրատարակեցին բազմաթիւ գիրքեր կրօնական նիւթոց վրայ Հայերէն ու Հայ-Տաճկերէն լեզուով, որոնց մէջ յայտնի ցուցուած են քարոզուած ճշմարտությունները: Նաեւ Կոստանդնուպօլսոյ զանազան թաղերը ամէն Կիրակի օր հրապարակաւ կը քարոզուին ան վարդապետությունները: Գաղտուկ բան մը եղած չէ. ուստի Միսիօնարներուն ինչ քարոզելը գիտնալու համար, հարկ չէր ըլլար իրեն երթալ աշխարհք տակն ու վրայ ընելու աղանդները համբել, ու անանկ մարդոց գաղափարներուն մանրամասն հաշիւ տալ, որոնց հետ ամենեւին բան մը չկայ: Իրեն ընելու գործը շատ մօտ իր քովիկն է. թող կարդայ ան գիրքերը, թող կենդանի բարբառով քարոզած վարդապետություննին մտիկ ընէ ու անկէ ետեւ ըսէ որ ճշմարտությունը կը քարոզեն թէ չէ» /«Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց», 1857, թիւ 74/:

²⁶ Հայ Եկեղեցու ծէսը Հնդիանուր Եկեղեցու ծեսերի մէջ ինքնայատուկ չէ: Հայ Եկեղեցու ծէսը կազմաւորուեց դեռնս գրերի գիւտից եւ Աստուածաշնչի թարգմանությունից առաջ: Բայց դ. դարից սկսած Հայ Եկեղեցին թէ՛ իր վարդապետական ըմբռնումով, թէ՛ իր իւրայատուկ ծէսով ազգային ուրոյն դրոշմ ստացաւ եւ ազգայնացաւ: /Հմմ. Ոսկեփորիկ կամ կրօնական գիտելիքների հանրագիտական /մասն Ա/, հեղինակ՝ Սերժ Մայիլեան/:

գաղափարախօսները,- ներկայ եկեղեցական ուսուցումը եւ ընդհանուր հաւատալիքի ո՛րեւ մասը որ Ս. Գրքի մէջ ուսուցուած է՝ Քրիստոնէական Կրօնի հեղինակաւոր կանոնն է ու եկեղեցիին գործը՝ իբր ԷԱԿԱՆ ՏԱՐԸ ԿԸ ՄՆԱՅ Քրիստոնէական սիսթէմի մէջ»²⁷:

Կարեւոր տարբերութիւններն է, որ բողոքականները ու կաթոլիկները կը կարծեն, թէ Սուրբ Հոգին կը բխի ե՛ւ Հօրմէն, ե՛ւ Որդիէն: Այս կը հակասէ Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ հաւատքին, ըստ որուն Սուրբ Հոգին կը բխի միայն Հօրմէն /Յովհ. ԺԵ 26/²⁸: Ըլլալով բողոքական, Հերման Դիորիսը Մակարի թուղթերու նկատմամբ կը կիրարկէ բողոքական չափանիշներ, եւ յատկապէս՝ Շնորհի եւ Բնութեան տարանջատում²⁹: Արեւմտեան միջին քրիստոնէան (յատկապէս բողոքական) կը դատէ այլ կերպ. ան կը հաւատայ Աստուծոյ ընդհանրապէս, իսկ Անոր Երրորդութեան պնդումը որպէս Հօր, Որդոյ եւ Հոգւոյ՝ կը նկատէ անօգտակար իմաստակութիւն եւ անցեալի վերապրուկ: Աստուծոյ նման ըմբռնումը, որպէս երկնային Հօր կամ «ընդհանրապէս Աստուծոյ»՝ կը կոչուի **Դէիզմ**³⁰, եւ

²⁷ **Ատանայեան Կ.Պ.**, Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցոյ, էջ60:

²⁸ Տակաւին ի վիճակի չըլլալով բուն խնդրոյ առարկան քննարկել տրամախօսութեան առաջին փուլին՝ Կոմիտեն յայտարարեց. «Առժամանակ մտադիր չլինելով լուծել Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ Որդու եւ Հոգւոյ միմեանց նկատմամբ ունեցած առնչութեան խնդրի կապակցութեամբ առաջացած տարաձայնութիւնները, մենք արդէն հիմա կարող ենք ասել, որ Հօրից/Յովհ. ԺԵ 26/իբրեւ Երրորդութեան միակ աղբիւրից բխող Հոգին դարձաւ մեր որդեգրութեան Հոգին (Հռոմ. Ը 15), քանզի Նա նաեւ Որդու Հոգին է (Գաղ. Դ 6), որը հաղորդակցում է մեզ հետ (նախ եւ առաջ Հաղորդութեամբ) այն Որդու միջոցով, Որի վրայ Նա հանգչում է ժամանակի եւ յաւիտենականութեան մէջ (Յովհ. Ա 32)»/ Քրիստոնէական միութեան աջակցութեան Քարտուղարութեան լրատուական ծառայութիւն /Serve d'Information, թիւ 49, էջ 116,1,6):

²⁹ Տե՛ս՝ **Սուրբ Մակար**, Խրատներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, էջ 161/վերջին տարիներուն սուրբ Մակարի ստեղծագործութեամբ զբաղած է բողոքական գիտնական Հերման Դիորիսը: Իր հետազոտութեան մէջ ան կը պնդէ, որ այդ երկերը Միմէոն Միջագետքցի միտումնաւոր վերագրած է Մակարին:

³⁰ **Դէիզմ** /լատ.՝ deus՝աստուած/, փիլիսոփայական ուղղութիւն, որ կ'ընդունի **Աստուծոյ** գոյութիւնը, աշխարհի ստեղծումը, բայց չ'ընդունիր կրօնական դոգմաները եւ միաթիկական երեւոյթները: Դէիզմի նպատակն է գիտութեան ու Աստուծոյ գոյութեան գաղափարներու միաւորումը, այլ ոչ թէ հակադրումը: Դէիզմի նշանաւոր հետեւորդներն են՝ **Վոլթերը, Ժան Ժաք Ռուսոն**, Միքայէլ Նալբանդեանը եւ այլք: «Մ. Նալբանդեանը նոյնպէս, հիմնաւորելով Արարչի եւ բնութեան

ծնած է Արեւմուտքի մեջ, 13-րդ դարուն՝ բանական մտքի ու հումանիզմի զարգացումով: Այս երկու մտեցումներու տարբերությունը կարելի է բնութագրել որպէս տարբերութիւն Աստուծոյ բանական, վերացական-փիլիսոփայական ըմբռնումին եւ ճշմարիտ-քրիստոնէական, այսինքն աստուածաշնչային, փորձուած, կարելի է նոյնիսկ ըսել՝ խորհրդապաշտութեան ընկալումին միջեւ /«միստիկականը» հասկնալով ոչ որպէս «իռացիոնալ» անտրամաբանական, այլ այն իմաստով, որ որեւէ անձնական հանդիպում չափով մը միստիկական բնոյթ ունի/:

Կան նաեւ այլ էական տարբերութիւններ: Բողոքականները չեն ընդունիր եկեղեցւոյ եօթը խորհուրդները: Օրինակ, ամուսնութիւնը, ըստ բողոքականներու, ոչ թէ եկեղեցւոյ խորհուրդ է, այլ երկու կողմերու միջեւ ստեղծուած, կնքուած համաձայնութիւն: Բայց հայ աւետարանականները կ'ընդունին մկրտութեան եւ հաղորդութեան խորհուրդները: Բողոքականները չեն ընդունիր եկեղեցւոյ օրէնքները կամ եկեղեցական սուրբ ժողովներն ու անոնց որոշումները, եկեղեցւոյ հայրերու վարդապետութիւնները ու եկեղեցական կանոնները: Բողոքականները կը հաւատան միայն Սուրբ գիրքին: «Անոր գլխաւոր հանգամանքները կամ հիմնական վարդապետութիւններն են /Chief Features and Fundamental Doctrines/. Ս. Գրոց գերակայութիւնը՝ Հաւատքով արդարացած /փրկութիւն ըստ Ս. Գրոց/ անհատական պատասխանատւութիւն, Ազատութիւն խղճի եւ պաշտաման, ու քահանայութիւն մը՝ բոլոր հաւատացեալները միասին առնելով /New Catholic Dictionary/»³¹, -կը նշէ հայ աւետարանականը:

Բողոքականները կ'ընդունին Եկեղեցին իբրեւ մէկ մարմին, որու գլուխը եւս մէկ է՝ Յիսուս Քրիստոս: Ուստի չեն ընդունիր որեւէ եկեղեցական իշխանութիւն: «Գահը նստեցնել իբր գերագոյն հեղինակութիւն հաւատացեալի հոգիին մէջ Աստուծոյ հոգիին վկայութեան ներքին լոյսը, ոչ թէ եկեղեցական սինօդի կամ եկեղեցապետի մը հեղինակութիւնը ...Փրօթեաթանթը (բողոքականը) երկու պարտականութիւն ունի, ուրեմն, մին՝ բացասական, ու միւսը դրական: Ա.-Բացասական կողմը-Անձ մը՝ որ սխալի դէմ *կը վկայէ*: Բ.-Դրական կողմը-Անձ՝ որ ճշմարտութեան *կը վկայէ*: Բողոքականութիւնն է՝ **պաշտպանութիւն** մեծ սկզբունքներու, **հաւատալ** մը՝

միասնութեան գաղափարը, ի տարբերութիւն իր որոշ ռուս նիւթապաշտ եւ արեւիստ ժամանակակիցների, դեիզմի դիրքերից էր բացատրում տիեզերակարգը» /Ա. Ալեքսանեան, տե՛ս Հայոց գրականութեան պատմութիւն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ. 2015, հ. 3, 264-265/:

³¹ **Ատանալեան Կ.Պ.**, Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Էջ60:

կրօնի հիմնական կետերուն, եւ **ապրում** մը՝ առաւելապէս քրիստոսատիպ կեանք մը»³²: /ստորեւ/:

- Բողոքականները շեշտը դրած են միայն հաւատի վրայ՝ հիմնուելով հետեւեալ խօսքի վրայ. «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիք դուն ու քու տունդ» /Գործք ԺԶ 31/: Ըստ անոնց՝ հաւատացեալը երբեք կորստեան պիտի չմատնուի, նոյնիսկ եթէ ուրացման մեղքը գործէ: Հաւատքի վրայ կեդրոնանալով՝ անոնք կ'անտեսեն գործերը, եւ Շնորհքի գործունէութեան մեծ կարեւորութիւն տալով՝ կ'ուրանան պայքարի անհրաժեշտութիւնը: Բողոքականները կ'ըսեն, որ հաւատքը պիտի գործէ սիրոյ միջոցով/Գաղ. Ե 6/:

- Բողոքականները կը մերժեն նաև Պատարագը եւ որեւէ ծիսական աղօթք:

Անոնք չեն հաւատար մկրտութեան գործութեանը, եւ վերստին ծննդեան հետ անոր առնչութեանը, արդարացմանը եւ մեղքերու թողութեանը: Մկրտութիւնը բողոքականութեան մէջ կը վերածուի պարզապէս անունի մը, առանց որեւէ ներգործութեան, եւ մկրտութիւնը կը դառնայ պարզապէս նշան մը կամ ծես մը, թէւ ծեսերու նոյնպէս չեն հաւատար: Աւետարանականները կ'ընդունին մեղքերու խոստովանութիւնը, որպէս հաւատացեալներու քահանայութեան առաքելութիւն: Եւ քահանայի կողմէ խոստովանողի գլխուն կարդացուող արձակման աղօթքը, ոչ ալ ընդհանրապէս արձակելու ու կապելու իշխանութիւնը: Աւետարանականները չեն հաւատար նաեւ Հաղորդութեան խորհուրդին՝ /չունին Ս. Պատարագ՝ աստուածային գոհագործութիւն, հացի եւ գինիի՝ սուրբ Մարմնի ու Արիւնի փոխարկում/, ուստի եւ եկեղեցիները չունին Ս. Սեղան: Աւետարանականները մեծ հետաքրքրութիւն ունին Սուրբ Գիրքին հանդէպ, սակայն «աստուածաշնչեան ճշմարտութեան» հարցով եւս անհամաձայնութիւն կայ:

- Աւետարանականները չեն ընդունիր Սուրբ Գիրքի՝ Տոբիթի, Հուլիթի, Սիրաքի, Բարուքի, Սողոմոնի Իմաստութեան, Մակաբեացիներու գիրքերը եւ այլն: Անոնք այս գիրքերը կը նկատեն պարականոն եւ Սուրբ Գիրքէն դուրս կը ձգեն /կաթողիկէները այս գիրքերը կ'ընդունին Սուրբ Գիրքի իրենց տարբերակին մէջ/:

- Աւետարանականները մեծ կարեւորութիւն չեն տար Հին Կտակարանի ուսմունքին, կարծես Տէր Քրիստոսը վերացուցեր է Օրէնքը կամ Մարգարէները /Հին կտակարանեան կարգ մը կարեւոր վկայութիւններ անոնք կը նկատեն միայն խորհրդանիշներ ու չեն ընդունիր իբրեւ

³² Նոյն տեղը, էջ 61:

վկայություն՝ յայտարարելով, թե ատոնք կը վերաբերին միայն հին ժամանակներուն: «Սակայն ժամանակները փոխուած են այժմ,-կը նշեն աւետարանականները:-Ազգային ոգին ամէն մարզի մէջ արթննալով, Հայ Բողոքականութիւնն ալ **աւելի ազգային** գոյն առած է: Լուսաւորեալ Բողոքականք այլեւս չեն հանդուրժեր **ազգային** զանգուածին յարաբերութենէ բոլորովին անջատուելու գաղափարին: Շատ մը Բողոքական եկեղեցիներու պաշտամանց մէջ ազգային եկեղեցւոյ շարականները, մեղեդիները ու աղօթքները լսել ճշմարիտ հաճոյք մըն է: Նոյնպէս երկու եկեղեցիներուն երբեմն պարագաներու ատեն միացեալ հոգեւոր պաշտամունքներ կատարելը ուրիշ ուրախալի յառաջդիմութիւն մըն է»³³:

- Աւետարանականները չեն ընդունիր Եկեղեցւոյ պահքերը եւ ուտելիքի կամ ըմպելիքի որեւէ սահմանափակում:

- Աւետարանականները չունին կուսակրօնութեան կարգը, անոնց բոլոր ծառայողները ամուսնացած են:

- Անոնք երբեք չեն աղօթեր ննջեցեալի համար եւ թողութիւն կամ յաւիտենական կեանք չեն հայցեր:

- Աւետարանականները չեն ընդունիր հրեշտակներու բարեխօսութիւնը: Անոնք կը համարեն, որ ընդհանրապէս բարեխօսութիւն չկայ Աստուծոյ ու մարդոց միջեւ:

- Աւետարանականները սուրբերուն փառաբանող երգեր չեն երգեր, անոնց յիշատակը չեն նշեր կամ չեն պատուեր անոնց նշխարները:

- Սրբապատկերներու դէմ պայքարը պատմութեան ընթացքին կարելորդ դեր խաղցած է բողոքականներու եւ կաթողիկէներու յարաբերութիւններուն մէջ: Անոնք չեն ընդունիր եկեղեցւոյ մէջ սրբապատկեր դնելը, անոնց առջեւ մոմ վառելը, կամ սուրբի անունին դիմելը:

- Ինչպէս նաեւ չեն կառուցեր հրեշտակի, մարտիրոսի կամ որեւէ այլ սուրբի անունով եկեղեցի:

- Սակայն Աւետարանականները ունին եկեղեցիներ՝ պարզապէս առանց Ս. Սեղանի, իկոնոստասի, աշտարակի, գմբէթի կամ սրբապատկերներու: Եկեղեցին կ'ունենայ միայն քարոզելու համար նախատեսուած ամպիոն ու նստարաններ, ինչպէս այն քրիստոնէական համայնքներուն մէջ, որոնց գործը միայն քարոզութիւնն է, հետեւաբար եկեղեցիները չեն նայիր դէպի արեւելք, ինչպէս աւանդական եկեղեցիները:

³³ **Ատանալեան Կ.Պ.**, Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, էջ144:

Աղօթողները նույնպես չեն նայիր միայն դեպի արեւելք, այլ ցանկացած ուղղությամբ:

- Աւետարանականները չեն ընդունիր ժամերգությունները, անոնց ժամերն ու բովանդակությունը: Եկեղեցիներու մէջ խունկ չի գործածուիր, բուրվար չկայ, չեն գործածուիր նաեւ մոմեր:

- Անոնք նաեւ չեն ընդունիր, թէ անհրաժեշտ է կարգ մը աղօթքներ գոց իմանալ, այլ կ'ընդունին, որ մարդ կրնայ աղօթել ե՛րբ կամենայ ու ի՛նչպէս որ կամենայ :

- Աւետարանականները կը հաւատան, թէ Տէր Քրիստոսը ժամանակներու վախճանին դարձեալ գալով՝ հազար տարի պիտի թագաւորէ երկրի վրայ՝ կապելով սատանան: Այդ շրջանին խաղաղութիւն պիտի ըլլայ, եւ գառն ու գայլը միասին պիտի բնակին /բողոքականներու միջեւ կան տարաձայնութիւններ՝ կապուած հազարամեայ թագաւորութեան վարդապետութեան մանրամասներուն/:

- Աւետարանականները չեն ընդունիր Տիրամօր մշտակոչութիւնը, այլ կը հաւատան, որ ան ամուսնացած է հիւսն Յովսէփին հետ եւ անկէ ծնած է երեխաներ, որոնց Աւետարանը «Յիսուսի եղբայրներ» կը կոչէ /Մատթ. ԺԲ 47/: Անոնք նոյնիսկ չեն պատուեր անոր, կը մերժեն կոչել **«շնորհընկալ»** /Ղուկ. Ա 28՝ ըստ յունարէն տարածուած բնագրերու/ ու յաճախ կը կոչեն «Յիսուսի մայր»: Անոնք չեն ընդունիր, որ անոր մարմինը վերափոխուեր է երկինք, ինչպէս որ կը հաւատան բոլոր ուղղափառներն ու կաթողիկէները: Չեն նշեր Աստուածամօր նուիրումը որեւէ տօն ու ոմանք նույնիսկ զայն կը կոչեն «մեր քոյրը»:

- Աւետարանականները ուսմունքներու առնչուած կ'ընդունին կրօնական ազատութիւնն ու բազմազանութիւնը³⁴, կարծես մոռնալով, որ ամէնքը պէտք է ունենան մէկ հաւատ՝ ըստ Եփես. Դ 5-ի:

- Սուրբ Հոգւոյ առնչութեամբ որոշ բողոքական խմբաւորումներ կ'ընդունին, թէ լեզուներով խօսելու շնորհը դեռ գոյութիւն ունի, զոր կը նկատեն Սուրբ Հոգիով լեցուած ըլլալու կամ լեցուելու նշան:

³⁴ «Հարկ է կրկին ընդգծել, որ երբ Տերտուլիանոսը /165-225/ խօսում է առաքելական ժառանգորդութեան մասին, նկատի ունի դաւանանքի ժառանգորդութիւնը: Նոյնիսկ երկար եւ մանրամասն տոհմաբանութիւնը չի օգնի հերետիկոս-գնոստիկներին. Հարկ է միայն լսել, թէ ի՛նչ են նրանք քարոզում: / Հետաքրքիր է, որ այդպիսի մօտեցումը թոյլ չի տալիս քննել դաւանանքի բազմազանութիւնը, ինչը որպէս դրական երեւոյթ այնքան տարածուած է ժամանակակից բողոքականութեան մէջ, եւ համախոհութիւնը վեր է դասում ձեւական «առաքելական» ծագումից/» /Բոհան Աւագերեց Մեյենդորֆ, «Ներածութիւն հայրախօսական աստուածաբանութեան», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 85/:

• Աւետարանականները որեւէ մէկու չեն կոչեր հայր, քահանայ կամ եպիսկոպոս, որովհետեւ սխալ կը հասկնան Տէր Քրիստոսի՝ առաքելներուն ուղղած խօսքը. «Ու երկրի վրայ **մա՛րդ** ձեզի հայր մի՛ կոչէք» /Մատթ. 23. 9/:

• Վերջապէս, Աւետարանականները թէւ խաչին մեծ կարեւորութիւն կու տան իբրեւ միջոցի, զոր Տէրը գործածեց մարդկութեան փրկութեան համար, սակայն չեն պատուեր զայն, ինչպէս ուղղափառները: Չեն նշեր խաչի յիշատակին կապուած օրեր, աղօթքները խաչակնքելով չեն սկսիր կամ աւարտեր, նոյնպէս՝ «Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» բանաձեւով: Հոգեւոր հովիւները իրենց ձեռքը խաչ չեն բռներ՝ խաչակնքելու կամ օրհնելու համար, որովհետեւ խաչը չեն ընդունիր իբրեւ օրհնութիւն բաշխելու միջոց, կամ որ օրհնութիւնը կրնայ տրուիլ քահանաներու կամ խաչակնքումի միջոցով³⁵:

3. Մեղմեան

Արեւմտահայ Աւետարանական շարժման ակունքները Ամփոփում

Հոդվածում բացահայտվում են օսմանյան կայսրությունում հայկական ավետարանական հոսանքի ձևավորման շարժառիթները, բացահայտվում է ավետարանական եկեղեցու դերը քրիստոնեական գաղափարների տարածման գործում:

Я. Селимеан

Истоки западноармянской евангельской движения

Резюме

В статье выявляются предпосылки и причины формирования армянского евангелического течения в Османской империи, выделяется роль евангелической церкви в деле распространения иды христианства.

Y. Selimean

Outflows of the Eastern Armenian Evangelical Movement

Summary

In the article there are revealed the rhythms of the Armenian evangelical motives in the Ottoman Empire. The role of Holy Church is revealed in the propagation of Christian ideology.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19

Հանձնարարվել է գրախոսության 08.07..19

Տպագրության է հանձնարարվել 15.10.19

³⁵ * Ներկայիս շատ բողոքականներ խաչ կը դնեն իրենց եկեղեցիներու վրայ, բան մը, զոր առաջ երբեք չէին ըներ: